Հավելված

«Մասնագիտական կրթության որակի ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի
հավատարմագրման հանձնաժողովի
2024թ. ապրիլի 8-ի N 1_L որոշման

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի

2023

Տնօրենի տարեկան հաշվետվություն

Բովանդակություն

ՈԱԱԿ 15-**ամյա գործունեության արդյունքները** **3-10**

ՈԱԱԿ հիմնական ուղենիշները և ձեռքբերումները **11-12**

Ռազմավարական նպատակ 1
Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում **13-22**

Ռազմավարական նպատակ 2
ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում **23-25**

Ռազմավարական նպատակ 3
Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակակական հաղորդակցում ու համագործակցություն **26-33**

Ռազմավարական նպատակ 4
Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում **34-38**

Ռազմավարական նպատակ 5
Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում **39-44**

Ռազմավարական նպատակ 6
ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները **45-47**

Մարտահրավերներ և զարգացման ուղղություններ **48**

ՈԱԱԿ-ը՝ 15 տարիներին

Մեր առաքելությունն է.

խթանել որակի շարունակական բարելավումը մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Մեր արժեքներն են.

- Վստահությունը
- Նորարարությունը
- Հավասարությունը
- Հաշվետվողականությունը
- Փոխգործակցությունը

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

Հավատարմագրումներ

33

- **ինստիտուցիոնալ հավատարմագրում բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մեկնարկելով հավատարմագրումների երրորդ շրջափուլը**
  - ներառյալ համատեղ հավատարմագրում Ֆրանսիայի հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհրդի **(HCERES)** հետ

37

- **ինստիտուցիոնալ հավատարմագրում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ առաջին շրջափուլով**

Մշտադիտարկումներ

122

- **մշտադիտարկման այց բարձրագույն ուսումնական հաստատություններում**

36

- **մշտադիտարկման այց ՄԿՈՒ հաստատություններում**

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

Փորձագիտական կարողությունների ձևավորում

Հավատարմագրումներին մասնակցել են

315

տեղացի փորձագետներ

109

ուսանող-փորձագետներ

33

միջազգային փորձագետներ

5

ուսանող-փորձագետ՝ ESU անդամ*

*5 ուսանող-փորձագետներ ներառվել են Ուսանողների եվրոպական ասոցիոցիայի ուսանող փորձագետների բազայում և ներգրավվել միջազգային կառույցների գնահատման գործընթացներում

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

Շահակիցների ներգրավվածություն

40 **իրականացված ֆորումներ և «Որակի շաբաթ» խորագրով միջոցառումների շարք, որոնք մեկ հարկի տակ են հավաքում 150-200 ներկայացուցիչներ բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից**

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

Միջազգայնացում

Անդամակցություն. ՈԱԱԿ-ն անդամակցում է

- Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA)
- Որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE)
- Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Որակի ապահովման գործակալությունների ցանցին (CEENQA)

Գրանցված է

- Եվրոպական որակի ապահովման գրանցամատյանում (EQAR)

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

ՈԱԱԿ-ը ներգրավված է եղել

20 Erasmus plus միջազգային ծրագրերում.
Ծրագրերի թեմաները ներառում են

- Որակի ներքին ապահովման համակարգի խթանում բուհերում
- Որակավորումների ազգային շրջանակի և կրթական ծրագրերի համահնչեցման մոդելի մշակում
- Որակավորումների ոլորտային շրջանակների մշակում և փորձարկում
- Կրթության երրորդ մակարդակի որակի արտաքին ապահովման չափանիշների մշակում և փորձարկում
- Տրանսազգային կրթության որակի ապահովման շրջանակի մշակում և փորձարկում
- Որակի արտաքին և ներքին գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացում և այլն

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

ՈԱԱԿ-ը՝ որպես փորձառու միջազգային կառույց, ներգրավվել է Եվրոպական համալսարանների ալիանսների արտաքին գնահատման շրջանակի մշակմանը և համակարգել է Նորարարության, տեխնոլոգիաների և ինժեներիայի ոլորտի եվրոպական համալսարանների ալիանսի արտաքին գնահատումը, որում ընդգրկված են համալսարաններ Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Իտալիայից, Գերմանիայից, Պորտուգալիայից և Իսպանիայից:

ՈԱԱԿ արտաքին գնահատման զեկույցները հրապարակվում են Որակի արտաքին ապահովման արդյունքների տվյալների բազայում (DEQAR)՝ ապահովելով հավատարմագրված ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչումը Եվրոպական բարձրագույն կրթական ծրագրում:

ՈԱԱԿ 15 տարիների գործունեության արդյունքները

ՈԱԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ռուբեն Թոփչյանի ներկայացված է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կառավարման խորհրդում:

ՈԱԱԿ աշխատակիցները ներգրավված են Բոլոնիայի հետամուտ խմբի (BFUG) «Որակի ապահովում» և «Որակավորումների շնորհում» թեմատիկ խմբերում:

2023թ.-ի «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հիմնական ուղենիշները և ձեռքբերումները.

- Որակի ապահովման շրջափուլային մոտեցման հաջող իրականացում. **ՈԱԱԿ-ը** մասնագիտական կրթական համակարգում **հաջողությամբ խթանել է շրջափուլային մոտեցումը՝** հիմք դնելով բուհերում և ՄԿՈՒ հաստատություններում տարբեր գործընթացների շարունակական բարելավմանը:
  - 2023 թվականին **բարձրագույն կրթական համակարգում մեկնարկել է հավատարմագրումների երրորդ, իսկ ՄԿՈՒ համակարգում երկրորդ շրջափուլը:**

- Հավատարմագրումների արդյունքում **ՄԿՈՒ հաստատությունները բարելավել են միջազգայնացման, արտաքին կապերի**՝ մասնավորապես գործատուների հետ համատեղ ռազմավարության իրականացումը, իսկ **բուհերը շարունակել են ներգրավվել կրթական ծրագրերի կատարելագործման աշխատանքներում:**

- **ՈԱԱԿ-ը խրախուսում է** ոլորտում առկա նորարարությունների ներդնումը մասնագիտական կրթական համակարգում:
  - Միջազգային մակարդակում որպես վստահելի գործընկեր՝ **ՈԱԱԿ-ը ներգրավված է եղել մի շարք եվրոպական ծրագրերում**, որոնց ընթացքում մասնակից է դարձել հետազոտությունների իրականացմանը, ՀՀ-ում առկա լավ փորձի տարածմանը և միջազգային փորձի ուսումնասիրմանն ու դրա տեղայնացմանը:

- **ՈԱԱԿ-ը կարևորում է ոլորտում առկա լավ փորձի տարածման հարթակների ստեղծումը և իր շահակիցների վստահության շարունակական բարձրացումը:**
  - Ստեղծված հարթակների արդյունքում բարձրագույն և միջին մասնագիտական համակարգի շահակիցները **հնարավորություն են ունեցել կիսվելու իրենց լավ փորձով և մասնագիտական այլ հաստատությունների ներկայացուցիչների հետ** քննարկումների արդյունքում ուղիներ բացահայտել հետագա զարգացման համար: Միաժամանակ, կազմակերպված **աշխատաժողովներն ու վերապատրաստումները բխել են ոլորտի մարտահրավերներից:**

2023թ.-ի «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հիմնական ուղենիշները և ձեռքբերումները.

ՈԱԱԿ-ը հաջողությամբ իրականացնում է սովորող կազմակերպության սկզբունքները:

- ՈԱԱԿ աշխատակիցների համար ստեղծվել են հնարավորություններ մասնագիտական զարգացման և աճի համար, որոնք նպաստում են ՈԱԱԿ-ի ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործմանը:

Կարևորելով ՈԱԱԿ-ի միջազգայնացումը՝ ջանքեր են **գործադրվել համատեղ միջազգային հավատարմագրումների փորձառության ձեռքբերման համար**, ինչպես նաև **ՈԱԱԿ փորձագետները ներգրավված են եղել միջազգային այլ կազմակերպությունների հավատարմագրման գործընթացներում,** ինչը ևս նպաստել է փորձի փոխանակմանը և միջազգայնացմանը:

Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսման և ամրապնդման համար:

Փաստեր

Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում

2023 թ.-ին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ է իրականացրել հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- Եվրասիա միջազգային համալսարան,
- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Ավանդական բժշկության համալսարան,
- Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:

Եվրասիա միջազգային համալսարանը և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը գտնվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման երրորդ շրջափուլում:

2023 թ.-ին Ֆրանսիայի հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհրդի (HCERES) հետ համագործակցությամբ ՈԱԱԿ-ն առաջին անգամ իրականացրել է համատեղ հավատարմագրման գործընթաց Հայաստանում ֆրանսիական համալսարանում:

Հաշվետու տարում միջազգային փորձագետներ են ներգրավվել հետևյալ կազմակերպություններից.

- Սորբոնի բիզնես դպրոց,
- Լիլի համալսարան,
- Կոմպիենի տեխնոլոգիական համալսարան,
- Համբուրգի համալսարան,
- Վրաստանի Գեոմեդի համալսարան,
- Լիբանանի ամերիկյան համալսարան:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են ՀՀ մի շարք բուհերից և հաստատություններից, մասնավորապես.

- Երևանի պետական համալսարան,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
- Հայաստանի ամերիկյան համալսարան,
- Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
- Եվրոպական համալսարան,
- Հայկական բժշկական ինստիտուտ,
- «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,
- Շուշիի տեխնոլոգիական համալսարան,
- Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան,
- ՀՀ Սահմանադրական դատարան:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կայացրել է հետևյալ 6 բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- **Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **ՀՀ պետական կառավարման ակադեմիա՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Եվրասիա միջազգային համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով: 4

ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում

2023 թ.-ին ՈԱԱԿ-ն իրականացրել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ **1** արհեստագործական և **14** միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, ինչպես նաև 4 ոչ պետական ՄԿՈ հաստատություններում: Պետական ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրումն իրականացվել է պետական ֆինանսավորմամբ: Հաշվետու տարում պետական ֆիանանսավորմամբ քոլեջների թիվը դարձել է **15.** նախորդ տարիների ընթացքում այն եղել է **5:**



Պետական ֆինանսավորմամբ ՄԿՈՒ հաստատությունների ընտրության նպատակով ՈԱԱԿ-ն իրականացրել է տվյալների հավաքագրում՝ իրականացվող կրթական ծրագրերի, գործատու-դասավանդողների, համագործակցող գործատուների, ուսանողների թվաքանակի վերաբերյալ: Տվյալների հավաքագրման և ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ քննարկումների արդյունքում ընտրվել են հետևյալ **15** ուսումնական հաստատությունները.

1. Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջ,
2. Արթիկի պետական քոլեջ,
3. Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ,
4. Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ,
5. Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ,
6. Գյումրու պետական բժշկական քոլեջ,
7. Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,
8. Աբովյանի պետական բազմագործառութային քոլեջ,
9. Գավառի պետական բժշկական քոլեջ,
10. Երևանի թիվ 1 տարածաշրջանային քոլեջ,
11. Սևանի բազմագործառութային պետական քոլեջ,
12. Երևանի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտականմանկավարժական քոլեջ,
13. Վանաձորի պետական բժշկական քոլեջ,
14. Արարատի պետական բժշկական քոլեջ,
15. Գյումրու թիվ 4 արհեստակցական ուսումնարան:

Նշված 15 ՄԿՈ հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին նախապատրաստելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է 3-օրյա առցանց աշխատաժողով, որին յուրաքանչյուր հաստատությունից մասնակցել է 5 աշխատակից: Բացի այդ, ընթացիկ աջակցություն տրամադրելու նպատակով ՄԿՈՒ հաստատությունների համար կազմակերպվել են խորհրդատվական երկու հանդիպումներ:

Հաշվետու տարում ինստիտուցիոնալ հավատարմագրման են դիմել հետևյալ ոչ պետական ՄԿՈՒ հաստատությունները.

1. **Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ,**
2. **Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն,**
3. **Պրովիզոր-նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ,**
4. **Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ (քոլեջն անցել է հավատարմագրման երկրորդ շրջափուլը):**

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կայացրել է հետևյալ 10 ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

1. **Երևանի հենակետային բժշկական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

2. **Մարտունու պետական բժշկական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

3. **Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

4. **Երևանի պետական հումանիտար քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

5. **Արթիկի պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

6. **Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

7. **Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**

8. **Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության, հայ-հունական պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, **2**

9. **Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, **2**

10. **«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով: **2**

Մշտադիտարկումներ ՄՈՒՀ-երում

Որակի մշակույթի շարունակական զարգացումը խթանելու, մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման համակարգերի գործունեության արդյունավետության վերաբերյալ տվյալներ հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ը 2023 թ.-ին շարունակել է իրականացնել մշտադիտարկումներ հավատարմագրված և դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Հաշվետու տարում **ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է** բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային **10 մշտադիտարկում:** Միջին մասնագիտական 10 հաստատություններում դիտարկվել է որակի ապահովման մշակույթի զարգացման ընթացքը:

Հավատարմագրված ուսումնական հաստատությունների դեպքում մշտադիտարկման գործընթացի առանցքում են եղել հավատարմագրումից հետո հաստատությունների կողմից մշակված Թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքը, գործընթացից հետո ուսումնական հաստատությունների կողմից արձանագրված ձեռքբերումները և զարգացման առկա մարտահրավերները:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են կրթական ծրագրերի կառավարման խնդիրները, վերջնարդյունքների ձեռքբերման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմի ու ենթակառուցվածքների համալրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև որակի ապահովման համակարգի ազդեցությունը մասնագիտական կրթական ծրագրերի խնդիրների վերհանման, լավ փորձի բացահայտման ու տարածման ուղղությամբ:

Դեռևս **հավատարմագրման գործընթաց չանցած ուսումնական հաստատությունների դեպքում** մշտադիտարկման ընթացքում դիտարկվել են հաստատությունների ռազմավարական զարգացման գործընթացները, որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Չհավատարմագրված ուսումնական հաստատությունների **մշտադիտարկումները ցույց են տվել, որ այս հաստատություններում դեռևս որակի ապահովման համակարգը ձևավորված չէ, ներդրված չեն շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ, որոնք կարող են նպաստել կառավարչական որոշումների արդյունավետ կայացմանը և ռազմավարական կառավարման համակարգի ներդրմանն այս հաստատություններում:**

2023 թ. ՈԱԱԿ-ը մեկնարկել է ՀՀ-ում գործող արտերկրի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի որակի ապահովման համակարգերի մշտադիտարկման գործընթացները, որոնք նախատեսվում է շարունակել նաև 2024 թ.-ին:

ՈԱԱԿ մշտադիտարկումների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել հաստատությունների ղեկավարների, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների, ուսանողների, որակի ապահովման պատասխանատուների հետ: Յուրաքանչյուր մշտադիտարկում ամփոփվել է հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ, որի ընթացքում ներկայացվել են գործընթացի արդյունքում բացահայտված դրական կողմերը և դեռևս առկա մարտահրավերները:

Մասնագիտությունների կրթական ծրագրեր

Մասնագիտական ուսումնական հաստատություններում ՄԿԾ-ների բարելավման շարունակական գործընթացները խթանելու և ծրագրային հավատարմագրման նախապատրաստելու համար ՈԱԱԿ-ը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է իրականացնել աշխատաժողովներ, քննարկումներ, վերապատրաստումներ ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար:

Հաշվի առնելով նախորդ տարվա ընթացքում ուսումնական հաստատությունների կողմից վերհանված կարիքը ՄԿԾ-ների բարելավման, դասավանդման և գնահատման արդյունարար մեթոդների ներդրման և կիրառման նկատմամբ՝ հաշվետու տարվա ընթացքում **ՈԱԱԿ-ը կազմակերպել է** «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներ» թեմայով **5 վերապատրաստում,** որոնց ընթացքում թիրախավորվել են կրթական ծրագրերի որակի ապահովման խնդիրները, դասավանդման մեթոդ-գնահատման մեթոդ-վերջնարդյունքների ապահովում շղթան: Վերապատրաստումներին մասնակցել է **5 բուհերից 75 ներկայացուցիչ:**



Կարևորելով բժշկական կրթական ծրագրերի բարելավումը և համապատասխանեցումը Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիայի (WFME) չափանիշներին՝ **ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ 2023 թվականին տեղի է ունեցել եռօրյա վերապատրաստում «Կրթական ծրագրերի համահնչեցում WFME (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով,** որին մասնակցել է 20 ներկայացուցիչ՝ Հայաստանում գործող 4 բժշկական ուսումնական հաստատություններից և բժշկական կազմակերպություններից: ՈԱԱԿ-ի հրավերով **վերապատրաստումն իրականացրել են** Եվրոպայում բժշկական կրթության ասոցիացիայի **(AMEE)** սերտիֆիցված մասնագետ **Մարիամ Վելիջանաշվիլին** և Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի **(NCEQE)** փորձագետ **Նինո Չիչիվեիշվիլին:** Վերապատրաստումը նվիրված էր դասավանդման և գնահատման ժամանակակից մեթոդներին՝ ըստ WFME և AMEE չափորոշիչների և օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննության (OSCE) ստուգաթերթերի (checklist) կազմմանը, խնդրի վրա հիմնված ուսուցման (PBL: problem-based learning), խնդիր լուծելով ուսուցման (PSL: problem solving learning), դեպքի վրա հիմնված ուսուցման (CBL: case-based learning) միջազգային փորձին:
2023թ. ընթացքում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակում ՈԱԱԿ փորձագետների կողմից ուսումնասիրվել են **7 բուհերի և 18 ՄԿՈՒ հաստատությունների 75 մասնագիտական կրթական ծրագրեր:** Մասնագիտական հանդիպումներ են տեղի ունեցել կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ, դուրս են բերվել դասավանդման հաջողված փորձերն ու բարելավման ենթակա խնդիրները:

2023թ.
ուսումնասիրվել է
75 ՄԿԾ

Կարևորելով ՄԿԾ-ների բարելավման լավ փորձի վերհանումն ու տարածումը՝ ՈԱԱԿ-ն արդեն 5 տարի շարունակ հարթակ է տրամադրում ՀՀ բուհերի աշխատակիցներին ներկայացնելու կրթական ծրագրերի բարելավման լավ փորձի օրինակները: 2023թ. ընթացքում իրականացվել է բուհերի **ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձերի քննարկման և ներկայացման 3 աշխատաժողով:** Աշխատաժողովներին ՄԿԾ բարելավման իրենց հաջողված փորձերը ներկայացրել է **ՀՀ բուհերից 6 բանախոս՝** Հայաստանի ամերիկյան, Հայաստանի ազգային ագրարային, Երևանի պետական, Հայաստանի եվրոպական, Շիրակի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից: Աշխատաժողովները տեղի են ունեցել առցանց հարթակում՝ յուրաքանչյուր հանդիպմանը ներգրավելով **ՀՀ բուհերից շուրջ 100 ներկայացուցիչների**:

2023թ. ՄԿԾ բարելավման հաջողված փորձերի ներկայացումը կրել է պարբերական բնույթ՝ հետաքրքրություն առաջացնելով բուհերի շրջանում: ՈԱԱԿ-ը նախատեսում է ՄԿԾ-ների հաջողված փորձերի քննարկում-հանդիպումներ իրականացնել նաև ՄԿՈՒ հաստատությունների շրջանակում:

Ձեռքբերումներ[1]

Վերլուծելով հավատարմագրման գործընթացների, մշտադիտարկումների արդյունավետության գնահատման հարցաշարերի և մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները

- **ընդլայնվել է հավատարմագրվող ՄԿՈՒ հաստատությունների շրջանակը՝** պետության խրախուսման միջոցով,
- ՄԿՈՒ հաստատություններում ղեկավար կազմը **կարևորում է ռազմավարական պլանավորման մշակույթի ներդնումը,**
- ՄԿՈՒ հաստատություններում կարևորվում է **միջազգայնացման և հետազոտական/ստեղծագործական գործունեության ընդլայնումը** և դրանց միտված աշխատանքների իրականացումը,
- ՈԱԱԿ-ը ձեռք է բերել **միջազգային համատեղ հավատարմագրման փորձառություն**, որը հնարավորություն է տվել բենչմարքինգի ենթարկել իրականացվող գործընթացները,
- փորձագետների տրամադրած խորհրդատվությունների հիմքով բուհերն **իրականացնում են կրթական ծրագրերի բարելավումներ,**
- իրականացված աշխատաժողովների և քննարկումների միջոցով ՈԱԱԿ-ն ակտիվորեն **նպաստում է մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործմանը**, ներառյալ խրախուսելով բժշկական ուղղվածությամբ բուհերին համահնչեցնել կրթական ծրագրերը միջազգային չափանիշներին, օրինակ Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) չափանիշները:

[1] Ազդեցության չափման համար հիմք են ծառայել ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հարցումների և քննարկումների արդյունքները: Հիմք են ընդունվել ռազմավարական նպատակների հաջողության չափանիշները:

ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

Հաջողության չափանիշ՝ Մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ հետազոտական հենքը մեծացել է: Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնելու համար առկա են բավարար քանակի մասնագետներ:

Փաստեր

Հետամուտ լինելով իր առաքելությանը՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների զարգացումն ու որակի մշակույթի տարածումը՝ 2023թ. ՈԱԱԿ-ը շարունակել է իրականացնել մի շարք աշխատանքներ, մասնավորապես.

- կարողությունների զարգացման վերապատրաստումներ,
- աշխատաժողովներ,
- քննարկումներ,
- փորձագետների բազայի համալրման աշխատանքներ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է փորձագիտական վերապատրաստումներ բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչների համար (դասախոսներ, ՈԱ պատասխանատուներ, ստորաբաժանումների ղեկավարներ, գործատուներ)՝ նպաստելով փորձագիտական բազայի համալրմանը: Փորձագիտական վերապատրաստումների խմբերը կազմվել են՝ հաշվի առնելով պլանավորված հավատարմագրումներն ու փորձագիտական բազան համալրելու հնարավորությունները՝ ըստ ոլորտային ուղղությունների: Նշյալի համատեքստում ընթացիկ տարվա ընթացքում վերապատրաստվել են հիմնականում **բժշկության, արվեստի, երաժշտության, տուրիզմի, մանկավարժության ոլորտի մասնագետներ:** Իրականացվել է **5 փորձագիտական վերապատրաստում,** ինչը հնարավորություն է տվել ՈԱԱԿ փորձագիտական բազան համալրել շուրջ **92 նոր փորձագետով:**

Հանդիպում-քննարկումներ են իրականացվել հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունների համար կազմված փորձագիտական խմբերի հետ: 2023 թվականին հավատարմագրման գործընթացներում ընդգրկվել են **87 տեղացի և 8 միջազգային փորձագետներ** հեղինակավոր ուսումնական հաստատություններից ու կազմակերպություններից:

Կարևորելով նաև ուսանողների կարողությունների զարգացումը՝ ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի կողմից իրականացվել են ուսանող-փորձագետների պատրաստմանն ուղղված դասընթացներ: 2023 թ.-ին **ՈԱԱԿ-ում վերապատրաստվել է 70 ուսանող՝** ՀՀ բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից:

8
Միջազգային
փորձագետ

87
Տեղացի
փորձագետ

2023 թվականին հավատարմագրման գործընթացներում ընդգրկվել են

92
Տեղացի
փորձագետ

70
Ուսանող
փորձագետ

2023 թվականին վերապատրաստվել են

Հաշվետու տարվա ընթացքում փորձագիտական աշխատանքի իրականացման առանձնահատկությունների քննարկման ուղղությամբ հանդիպումներ են իրականացվել դասընթացն ավարտած ուսանողների և ՈԱԱԿ ուսանող-փորձագետների բազայում ընդգրկված, փորձագիտական աշխատանք իրականացրած ուսանողների հետ:

2023թ. ՈԱԱԿ ուսանող-փորձագետներից ևս մեկը դարձել է Եվրոպական ուսանողական միության (այսուհետ՝ Միություն) որակի ապահովման խմբի անդամ: Մինչ այժմ Միությանն անդամակցության հնարավորություն են ստացել ՈԱԱԿ 5 ուսանող-փորձագետներ:

Ներկայումս փորձագետների բազայի համալրումը պայմանավորվում է պլանավորված հավատարմագրումներով, իսկ բոլոր ոլորտներներն ընդգրկող փորձագիտական բազայի համալրումը դեռևս մարտահրավեր է մնում:

Ձեռքբերումներ

Վերլուծելով հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների և ՄՈՒՀ-երի կողմից լրացված հարցաշարերի արդյունքները, դիտարկելով Հանձնաժողովի կարծիքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- փորձագետներին հաջողվում է հավաքագրված **տվյալների հիմքով իրականացնել վերլուծություններ** և հաստատություններին տրամադրել բարելավմանն ու առաջանցիկ զարգացմանը միտված խորհրդատվություններ,
- **փորձագիտական կարողությունների շարունակական զարգացումը** նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանը,
- ՈԱԱԿ փորձագիտական բազայում ընդգրված դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչները ձեռք բերված **փորձն ու կարողությունները ներդնում են իրենց ուսումնական հաստատությունների զարգացման հիմքում,**
- **հանձնաժողովի անդամները, փորձագիտական համակազմի ներկայացուցիչները խրախուսում են իրենց գործընկերներին և ուսանողներին** մասնակցել ՈԱԱԿ փորձագիտական վերապատրաստումներին և «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված դասընթացներին՝ համալրելու փորձագիտական շարքերը:

Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Հաջողության չափանիշ՝ Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության մեծացում:

Փաստեր

2023 թ. ՈԱԱԿ առաջնահերթություններից է շահակիցների հետ համագործակցության ընդլայնումն ու զարգացումը, որի նպատակով իրականացվել են տարբեր միջոցառումներ՝

- համաժողովներ,
- աշխատաժողովներ,
- փորձի փոխանակման միջոցառումներ,
- թեմատիկ քննարկումներ և վերապատրաստումներ,
- հանդիպումներ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և ՈԱ պատասխանատուների հետ:

2023 թ. ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է 2 համաժողով.

1. **«Հավատարմագրման ազդեցությունը մասնագիտական կրթության որակի մշակույթի ձևավորման վրա» խորագրով փորձագետների համաժողով,** որն իրականացվել է առաջին անգամ: Համաժողովի նպատակն էր մեկ հարկի տակ հավաքել 2011-2022 թվականներին իրականցված հավատարմագրումներին մասնակցած փորձագետներին և քննարկել հավատարմագրումների ազդեցությունը մասնագիտական կրթական համակարգի վրա: Համաժողովին մասնակցել են շուրջ **100 փորձագետներ:** Փորձագետների շեշտադրմամբ իրենց **խորհրդատվությունների հիմքով առավելապես բարելավվել են «Մասնագիտական կրթական ծրագրեր», «Որակի ներքին ապահովման համակարգ», «Առաքելություն և նպատակներ» տիրույթները:** Հարկ է նշել, որ համաժողովի քննարկումների արդյունքում փորձագետները դուրս են բերել, որ «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Կառավարում և վարչարարություն» տիրույթների զարգացումը **դեռևս մարտահրավեր է ուսումնական հաստատությունների համար:** Համաժողովի «Հավատարմագրումն ապագայում» պանելային քննարկմանը ամփոփվել են հավատարմագրման տարբեր շրջափուլերի արդյունքներն ու մարտահրավերները:

2. ՄԿՈՒ հաստատությունների համաժողով՝ **«Տնտեսական աճը կարողությունների զարգացման միջոցով» խորագրով,** որին իրենց մասնակցությունն են ցուցաբերել ՀՀ **85 ՄԿՈՒ հաստատություններից շուրջ 250 ներկայացուցիչներ. 30 տոկոսը կազմել են գործատուները:** Պանելային քննարկումներն իրականացվել են հետևյալ թեմաների շուրջ՝ «Տնտեսական զարգացում՝ համահնչեցնել ՄԿՈՒ կրթական ծրագրերն արդյունաբերության կարիքներին», «Կարող աշխատուժի ձևավորումը տալիս է տնտեսական զարգացման շոշափելի արդյունք. ՄԿՈՒ հաջողված փորձի ներկայացում»: Պանելային քննարկումների ընթացքում քննարկվել և ՄԿՈՒ հաստատություններին են **ներկայացվել քոլեջ-գործատու համագործակցության հաջողված փորձերը,** որոնք են նպաստել են կարողունակ մասնագետների պատրաստմանը: Համաժողովի արդյունավետության գնահատման հարցաշարի արդյունքները ցույց են տալիս, որ **ՄԿՈՒ ոլորտի շահակիցները համաժողովն արդյունավետ են համարել,** շեշտադրել են հատկապես գործատու-ՄԿՈՒ կապի ամրապնդման գործիքակազմը, շոշափելի արդյունքների հասնելու համար կարողունակ աշխատուժ ձևավորելու կարիքների վերհանումը, հաջողված փորձի փոխանակումը: Մասնակիցների կողմից կարևորվել է նաև գործատուների ակտիվ մասնակցությունը համաժողովին:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կարևորել է գործընկերային համագործակցության շրջանակում բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիրների հետ երկխոսության ձևավորումն ու զարգացումը, որի շրջանակում բուհերի պրոռեկտորների և ՈԱ պատասխանատուների հետ կազմակերպվել և իրականցվել է **«Ծրագրային հավատարմագրման մեկնարկի համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը, կրթության որակի շարունակական լավացումը» թեմայով աշխատաժողովը,** որի ընթացքում տարբեր բուհերի ներկայացուցիչներ կիսվել են կրթության որակի ապահովման և բարելավման իրենց փորձով, տեսլականով, ինչպես նաև քննարկվել են ծրագրային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների իրականցման հարցերը:

Աշխատաժողովին մասնակցել է հավատարմագրված **16 բուհից շուրջ 30 ներկայացուցիչ:**

2023թ. կազմակերպվել է առանձին հանդիպում-քննարկում բժշկության ոլորտի 6 բուհերի պրոռեկտորների և ՈԱ պատասխանատուների հետ՝ միջազգային վերապատրաստումների և կրթության որակի շարունակական բարելավման խնդիրների քննարկման շրջանակում:

Բացի այդ, ՄԿՈՒ հաստատությունների ՈԱ պատասխանատուների հետ ևս իրականացվել են կլոր-սեղան հանդիպումներ, քննարկվել են ՈԱ մշակույթի ներդրման և տարածման հաջողված փորձերն ու առկա խնդիրները: **ՄԿՈՒ հաստատությունների համար կազմակերպվել է նաև Ինքնավերլուծության իրականացման վերաբերյալ վերապատրաստում՝ ընդգրկելով 15 քոլեջից 75 մասնակիցների:**

Հաշվետու տարվա ընթացքում իրականցվել են թեմատիկ և փորձագիտական վերապատրաստումներ: Մասնավորապես **կազմակերպվել է 6 թեմատիկ և 5 փորձագիտական վերապատրաստում:**

2023թ. ուսանողների հետ պարբերաբար իրականացվել են կրթական համակարգի խնդիրների վերաբերյալ հանդիպումներ՝ մասնագիտական կրթության առանձնահատկությունների, որակի ապահովման դերի և որակի մշակույթի վերաբերյալ: Հաշվի առնելով ընթացիկ տարում հավատարմագրվող ուսումնական հաստատությունների ոլորտները՝ **ուսանողներն ընդգրկվել են մասնագիտական հետևյալ ուղղություններից՝ բժշկություն, արվեստ, կառավարում, հաշվապահություն, զբաստաշրջություն և մանկավարժություն:** ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են նաև Երևանի պետական համալսարանի, Բրյուսովի անվան պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի՝ Կրթության կառավարման, կազմակերպման ուղղությամբ սովորող ուսանողների հետ հանդիպումներ մասնագիտական կրթության ոլորտի խնդիրները քննարկելու համար:

Լուսաբանում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը իրականցրել է ակտիվ արտաքին հաղորդակցություն: ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներն ու իրադարձությունները լուսաբանվել են պաշտոնական կայքում (www.anqa.am) և ՈԱԱԿ-ի սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում՝ Facebook, X (նախկին Twitter), LinkedIn, Youtube:

2023 թվականին լուսաբանվել է.

- հավատարմագրման 16 գործընթաց,
- 20 մշտադիտարկում,
- 10 վերապատրաստում,
- 2 համաժողով,
- 5 աշխատաժողով,
- միջազգային 15 համագործակցություն,
- շահակիցների հետ 16 հանդիպում:

ՈԱԱԿ գործունեությունը լուսաբանվել է ՀՀ-ում գործող ԶԼՄ-ների կողմից, բացի այդ՝ սոցիալական ցանցերում հրապարակվել են հանրամատչելի և տեղեկատվական տեսանյութեր և վիզուալներ, կազմակերպվել են թեմատիկ հարցազրույցներ:

Սոցիալական ցանցերում իրականացվել է **192 հրապարակում,**

www.anqa.am պաշտոնական կայքում տեղադրվել է **112 նորություն,**

ՀՀ-ում գործող ԶԼՄ-ների կողմից ՈԱԱԿ գործունեությունը լուսաբանվել է **13 անգամ:**

ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում արված հրապարակումների արդյունքում էջի դիտելիությունը կազմել է 182,138.



2. էջի այցելությունները՝ 54,601.

3. էջի հավանումների քանակն ավելացել է 375-ով

2022թ. համեմատությամբ **էջի դիտելիությունը աճել է 5.4%-ով, էջի այցելուների քանակը ավելացել է 72.7%-ով, էջի հավանումների քանակը նվազել է 17.9%-ով:**
ՈԱԱԿ պաշտոնական կայքը՝ www.anqa.am, 2023թ. ընթացքում ունեցել է **16.000 օգտատեր, որոնք կայքում իրականացրել են 93.000 գործողություն:** Օգտատերերի՝ կայքում անցկացված միջին ժամանակահատվածը կազմում է 2:04:

ՈԱԱԿ պաշտոնական կայքում ամենաշատ դիտումներ ունեցող 10 էջերն են.

1. anqa.am գլխավոր էջը,
2. «Հավատարմագրում» բաժինը,
3. Գլխավոր էջի անգլերենով տարբերակը,
4. «Լուրեր» բաժինը,
5. «Հրապարակումներ» բաժինը,
6. «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի» բաժինը՝ պետական հավատարմագրման գրանցամատյանում,
7. «Հավատարմագրում» բաժնի անգլերեն տարբերակը,
8. «Որոնել» բաժինը,
9. «Փորձագետներ» բաժինը,
10. Պետական հավատարմագրման գրանցամատյանի անգլերեն տարբերակը:

	Page title and screen class	Views	Users	Views per user	Average engagement time	Event count All events
		44,462 100% of total	15,762 100% of total	2.82 Avg 0%	22s Avg 0%	93,459 100% of total
1	ՈԱԱԿ | ՈԱԱԿ	8,078	3,282	2.46	14s	18,412
2	ՈԱԱԿ | Հավատարմագրում	4,716	1,225	3.85	40s	7,673
3	ANQA | ANQA	2,166	1,119	1.94	18s	4,203
4	ՈԱԱԿ | Լուրեր	1,348	276	4.88	1m 15s	2,006
5	ՈԱԱԿ | Հրապարակումներ	1,292	373	3.46	14s	1,684
6	ՈԱԱԿ | Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	1,054	824	1.28	9s	3,110
7	ANQA | Accreditation	854	336	2.54	37s	1,417
8	ՈԱԱԿ | Որոնել	797	325	2.45	15s	1,078
9	ՈԱԱԿ | Փորձագետներ	777	496	1.57	17s	1,309
10	ANQA | Institutional accreditation state register	627	379	1.65	12s	1,562

2023 թվականի ընթացքում ՈԱԱԿ պաշտոնական կայք մուտք գործած օգտատերերը ներկայացնում են հետևյալ երկրները՝

1. Հայաստան՝ 12.000,
2. ԱՄՆ՝ 1200,
3. Ինդոնեզիա՝ 265,
4. ՌԴ՝ 231,
5. Գերմանիա՝ 174,
6. Չինաստան՝ 145,
7. Հնդկաստան՝ 135:

2023թ. ընթացքում ՈԱԱԿ-ը ունեցել է **13 արտաքին լուսաբանում,** ինչը ներառում է անհատական հարցազրույցներ և ռեպորտաժներ իրականացվող ընթացիկ աշխատանքներից՝ վերապատրաստումներ, հավատարմագրումներ, համաժողովներ և այլն:

Արտաքին լուսաբանման ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.

- մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներ,
- ՄԿՈ հաստատություններում ինստիտուցիոնալ հավատարմագրման առանձնահատկություններ և առավելություններ,
- վրացի փորձագետների հետ համագործակցությամբ իրականացված «Բժշկական կրթական ծրագրերի համահնչեցում WFME (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով վերապատրաստում,
- ՈԱԱԿ համաժողովներ՝ «ՈԱԱԿ փորձագետների համաժողով» և «Տնտեսական աճը՝ կարողությունների զարգացման միջոցով» ՄԿՈՒ հաստատությունների համաժողով:

ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյանն անդրադարձել է.

- պրակտիկ և տեսական կրթության ինտեգրման կարևորությանը և մեխանիզմներին,
- միջին մասնագիտական կրթության որակի ապահովման առանձնահատկություններին,
- աշխատաշուկայի պահանջների և մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցման կարևորությանը,
- ՈԱԱԿ հավատարմագրումների միջոցով հայաստանյան բուհերի և քոլեջների միջազգայնացման հնարավորություններին,
- ՈԱԱԿ 15-ամյա գործունեության ձեռքբերումներին և հետագա անելիքներին:

Ձեռքբերումներ

Վերլուծելով իրականացված միջոցառումների, վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցաշարերն ու շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- **հաջողությամբ իրականացվել են միջոցառումներ, որոնք ներառում են ոլորտի բոլոր շահակիցներին.** համաժողովներ, վերապատրաստումներ, թեմատիկ քննարկումներ, որոնք նպաստել են շահակիցների միջև պրոակտիվ համագործակցությանը և երկխոսությանը, ինչպես նաև փորձի փոխանակմանը,
- **առաջին անգամ իրականացվել է ՈԱԱԿ փորձագետների համաժողովը**, որի ընթացքում քննարկվել են հավատարմագրման ազդեցությունը բուհերի զարգացման վրա, ինչպես նաև հավատարմագրումների արժանահավատությունը,
- ՈԱԱԿ-ի կողմից ստեղծված դասավանդման արդյունավետ մոդելների քննարկման և փորձի փոխանակման համար հարթակները **մեծ հետաքրքրություն են առաջացրել շահակիցների շրջանում,**
- **մեծացել է շահակիցների շրջանակը՝** ընդգրկելով գործատուներին, որի նպատակն է առավել մեծ շեշտադրում կատարել նրանց կարիքներին,
- www.anqa.am կայքի և Հավատարմագրման պետական գրանցամատյանի նկատմամբ **մեծացել է օտարերկրյա օգտատերերի հետաքրքրվածությունը,**
- **բարձրացել է ՈԱԱԿ-ի գործընթացների տեսանելիությունը սոցիալական հարթակներում,** ինչը ցույց է տալիս շահակիցների աճող հետաքրքրությունը և նրանց հետ փոխգործակցության ընդլայնումը:

Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Հաջողության չափանիշ՝ Տարեկան կտրվածքով հրապարակվում են թեմատիկ վերլուծություններ, հաշվետվություններ: Շահակիցները բավավարված են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացներից և դրանց իրավակարգավորումներից:

Փաստեր

Հաշվետու տարում ՈԱԱԿ հոգաբարձուների կողմից հաստատվել և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել են ՈԱԱԿ կանոնադրության փոփոխությունները, որոնք վերաբերում են հոգաբարձուների խորհրդի կազմի և լիազորությունների ժամկետի փոփոխությանը:

Կանոնադրական նոր փոփոխությունների համաձայն՝ **հաշվետու տարում ձևավորվել է ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի նոր կազմը՝ 5 տարի ժամկետով:**

2023 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի թիվ 978-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրի պետական հավատարմագրման կարգում (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ ԿԳՄՍՆ: Փոփոխությունները մասնավորապես վերաբերում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման ժամկետներին և պայմաններին, որոնք համապատասխանեցվել են ՄԿՈ հաստատությունների առանձնահատկություններին, որոշ դրույթների ուժը կորցրած ճանաչելուն՝ ժամանակավրեպության հիմքով, Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման, լիազոր մարմնի կողմից հավատարմագրման վկայականի հաստատման ժամկետներին, ինքնավերլուծությունը ներկայացնելու, հավատարմագրման վկայականը հետ վերադարձնելու պայմաններին, ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկի հաստատմանը:

Հաշվետու տարում շահակիցների առաջարկությունների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկություն է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍՆ՝ Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների առանձնահատկությունների վերաբերյալ:

Հաշվետու տարում վերանայվել է նաև ՈԱԱԿ կանոնադրությունը՝ նոր նպատակների սահմանման, նոր խնդիրների և դրանցից բխող ձեռնարկատիրական գործունեության տեսակների ավելացման նպատակով: Կանոնադրության փոփոխությունները ներկայացվել են ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդին: **2024 թվականին նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ ՈԱԱԿ շահակիցների հետ կանոնադրական նոր փոփոխությունների քննարկման նպատակով:**

Հաշվետու տարում մշակվել են նաև ՈԱԱԿ ներքին կարգապահական նոր կանոնները՝ համապատասխանեցնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի և այլ օրենքների պահանջներին, ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը, որոնց հաստատումը նախատեսվում է 2024 թվականին:

Հաշվետու տարում ՈԱԱԿ աշխատակազմը ուսումնասիրել է WFME-ին անդամակցության, գնահատման չափանիշները, հրավիրել փորձագետ Վրաստանից WFME-ի չափանիշներին համապատասխանության վրացական փորձը բժշկական կրթություն մատուցող բուհերին ներկայացնելու և վերապատրաստելու համար: **Ուսումնասիրությունների հիման վրա ՈԱԱԿ-ը առաջարկություններ է ներկայացրել ՀՀ ԿԳՄՍՆ-ին և Առողջապահության նախարարությանը՝ նշելով WFME-ին ՈԱԱԿ-ի անդամակցության և իրականացրած հավատարմագրման արդյունքների ճանաչման անհրաժեշտությունն ու կարևորությունը ՀՀ բժշկական կրթության զարգացման համար:**

Համակարգային վերլուծություններ

2023 թվականին ՈԱԱԿ-ը իրականացրել է **«Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով համակարգային վերլուծություն:**

Հետազոտության նպատակն էր.

- ուսումնասիրել ՄԿԾ-ների կառավարման և որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացների կիրառվող մոտեցումները,
- պատկերացում կազմել առանձին բաղադրիչների և իրականացվող կրթական քաղաքականությունների փաստացի վիճակի վերաբերյալ,
- վեր հանել լավագույն փորձը և հասանելի դարձնել ներքին/արտաքին շահակիցների և հասարակության համար,
- հնարավորություն տալ ուսումնական հաստատություններին և ՄԿԾ ղեկավարներին սովորել միմյանցից և տեղայնացնել լավագույն փորձը:

Հետազոտությունն իրականացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ընդգրկում է ՀՀ հավատարմագրված բոլոր բուհերը: Հետազոտվող թեմայի վերաբերյալ կազմվել է պահանջվող փաստաթղթերի ցանկ և հարցաշարի հետ ուղարկվել ուսումնական հաստատություններին: Ստացված տվյալների ուսումնասիրմամբ իրականացվել է որակական և քանակական վերլուծություն: Հետազոտության արդյունքները կհրապարակվեն 2024թ.-ին:

Որակի ապահովման համակարգի ներդրումը և որակի մշակույթի ձևավորումը գնահատելու նպատակով պլանավորվել է իրականացնել **համակարգային վերլուծություն ՄԿՈՒ ոլորտում**:

Հետազոտության իրականացման նպատակով մշակվել է հարցաթերթիկը և վերլուծության մեթոդաբանությունը: Վերլուծության իրականացումը պլանավորված է 2024թ.-ին:

ՈԱԱԿ-ի անձնակազմը, ներգրավված լինելով Բոլոնիայի թեմատիկ աշխատանքային խմբերում, իրականացրել է ուսումնասիրություններ ՀՀ համատեքստում մի քանի ուղղություններով.

- **Միկրոորակավորումների կանոնակարգումը ՀՀ-ում.** Ուսումնասիրության շրջանակներում նախ իրականացվել է SWOT վերլուծություն, ապա տարբեր երկրներից SWOT վերլուծություններից ստացված տվյալների հիման վրա մշակվել է հարցաշար և կիրառվել ԵԲԿՏ անդամ երկների շրջանում: Ուսումնասիրությունների հիման վրա պարզ է դարձել, որ ոլորտը **ՀՀ-ում չի կանոնակարգվում, միկրոորակավորումն օրենսդրությամբ սահմանված չէ, վերջիններս ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան տեղայնացված չեն, բացակայում են միկրոորակավորումների ճանաչման որակի ապահովման մեխանիզմները:**
- **ՈԱՇ-ի ինքնահավաստագրում.** **ՈԱՇ-ի ինքնահավաստագրմանը նախապատրաստելու նպատակով իրականացվել է այլ երկրների ինքնահավաստագրման զեկույցների ուսումնասիրություն, ինքնահավաստագրման չափանիշներին և ընթացակարգերին համապատասխանության տեսանկյունից ՀՀ վիճակի գնահատում,** առանձնացվել են՝ յուրաքանչյուր չափանիշի մակարդակով ինչպիսի տվյալների և տեղեկատվության անհրաժեշտություն կա: Մշակվել է ինքնահավաստագրման զեկույցի նախնական կառուցվածքը:

- **Համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովում.** Ուսումնասիրության շրջանակը ներառել է երկու ուղղություն՝ «Համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցմանը» համապատասխան իրավական դաշտի փոփոխություններ և ինստիտուցիոնալ հեռանկարները «Համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցման» իրականացման գործում: **Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործող օրենսդրությունում բաց են համատեղ կրթական ծրագրերի իրականացման և դրանց որակի ապահովման կարգավարումները: ՈԱԱԿ-ը, գրանցված լինելով Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR), իրավունք ունի կիրառել «Համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցումը»:**

ՀՀ-ում կան որոշ միջպետական բուհեր՝ օրինակ Հայաստանում Ֆրանսիական համալսարանը, որը միջպետական համաձայնագրերի հիման վրա իրականացնում է համատեղ կրթական ծրագրեր, որի արդյունքում շրջանավարտներին շնորհվում են համատեղ որակավորումներ՝ դիպլոմներով:

Կան նաև բուհեր, որոնք համատեղ կրթական ծրագրեր մշակել են ERASMUS+ ծրագրերի շրջանակներում (Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան): **Սակայն այս ծրագրերը դեռևս չեն անցել հավատարմագրում:**

Ձեռքբերումներ

Դիտարկելով թեմատիկ վերլուծության արդյունքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- ՈԱԱԿ Կանոնադրությունում հաջողությամբ **կատարվել են փոփոխություններ, որոնք հնարավորություն են տալիս ՈԱԱԿ Հոգաբարձուների խորհրդում ներգրավել կրթության և գիտության ոլորտի փորձառու մասնագետների,**
- **գործող իրակագավորումներն ապահովում են անկախ և անկողմնակալ հավատարմագրումների իրականացումը,** որոնք միտված են ՄՈՒՀ-երի շարունակական բարելավմանը,
- իրականացվող վերլուծությունները ներառում են տարբեր թեմատիկ ուղղություններ, ինչի արդյունքում **դուրս են բերվել մարտահրավերներն ու լավ փորձի օրինակները:**

Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր: ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. հաջողությամբ պահպանելու է Եվրոպական բարձրագույն կրթության ասոցացիայի անդամակցությունը և Եվրոպական ռեգիստրում ընդգրկվածությունը:

Փաստեր

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանը և միջազգային փորձի տարածմանը խթանելու նպատակով իրականացվում են մի շարք միջացառումներ, մասնավորապես՝

- եվրոպական ցանցերին անդամակցություն,
- միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն փորձի փոխանակման նպատակով,
- միջազգային ցանցերի և կառույցների կողմից կազմակերպված միջացառումներին և աշխատաժողովներին մասնակցություն,
- ՄԿՈ ոլորտում հայտնի Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) արտաքին գնահատումներին մասնակցություն,
- համատեղ հավատարմագրումների իրականացում,
- Բոլոնիայի թեմատիկ խմբերի աշխատանքներին ու մշակումներին մասնակցություն:

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) փորձագիտական խմբի դրական եզրակացության հիման վրա ՈԱԱԿ-ը մինչև 2027թ.-ը համարվում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR):

ՈԱԱԿ գրանցումն EQAR-ում և ENQA-ում հայաստանյան բարձրագույն կրթական համակարգն առավել տեսանելի է դարձնում միջազգային ասպարեզում: ՈԱԱԿ-ի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի զեկույցները հասանելի են Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR): **Հաշվետու տարվա ընթացքում Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարան է ներբեռնվել 6 բուհի արտաքին գնահատման փորձագիտական զեկույց:**

ՈԱԱԿ տնօրենը ENQA խորհրդի անդամ է: Ներգրավվածությունը ENQA խորհրդում հնարավորություն է տալիս քննարկելու որակի ապահովման ներկայիս միտումները և ներդնելու դրանք ՀՀ-ում իրականացվող կրթական բարեփոխումների գործընթացում:

2024 թվականին ENQA-ի կողմից նախատեսվում է միջանկյալ գնահատման այց ՈԱԱԿ:

Հաշվետու տարում մեկնարկել են ENQA-ի կողմից միջանկյալ գնահատման այցի նախապատրաստական աշխատանքները: Ինչպես նաև շարունակվել են աշխատանքները Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից տրամադրված խորհրդատվությունների իրականացման ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում **ՈԱԱԿ-ի աշխատակազմը շարունակել է մասնակցել ENQA-ի կողմից կազմակերպված վեբինարներին և աշխատաժողովներին, որոնք նվիրված էին միկրոորակավորումների որակի ապահովման մեխանիզմների մշակմանը, որակավորումների փոխճանաչմանն ու որակի ապահովման համակարգի համատեղ գործընթացների իրականացմանը, հետքովիդյան մարտահրավերներին և այլն:** ՈԱԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են ENQA-ի Մասնակիցների Ընդհանուր Ժողովին, որի ընթացքում **ներկայացրեցին ՈԱԱԿ-ի կողմից մշակված «Բուհերում կարողությունների զարգացման» մոդելը, որը նպաստել է կրթական ծրագրերի շրջափուլային բարելավմանը:** Մոդելի ներկայացման և քննարկմանը մասնակցել են շուրջ 30 երկրների ՈԱ կառույցների ղեկավարներ և աշխատակիցներ, որի ընթացքում հնչել են հարցեր և առաջարկություններ, ներառյալ՝ դիտարկելու մոդելի տարրերը հավատարմագրման գործընթացում ներառելու հնարավորությունները:

Միջազգային գործընկերների շրջանում հետաքրքրություն առաջացրած մոդելը մի քանի անգամ կիրառվել է ՈԱԱԿ-ի կողմից հայաստանյան բուհերի (Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան և այլն) հետ համագործակցության արդյունքում, որի արդյունավետությունը ընդգծել են ոչ միայն մասնակից վերապատրաստվող դասախոսները, այլև բուհերի ղեկավար անձնակազմը:

ՈԱԱԿ-ը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է անդամակցությունը Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային (INQAAHE), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների (CEENQA) ցանցերին:

Անդամակցությունների շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ աշխատակազմը մասնակցել է ցանցերի կողմից կազմակերպված փորձի փոխանակման միջացառումներին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների (CEENQA) ցանցի ամենամսյա հանդիպման ժամանակ ՈԱԱԿ-ը ներկայացրել է իր գործունեությունը և որակի ապահովման ոլորտում առկա լավ փորձը:

2023 թվականին մեկնարկել է **ՈԱԱԿ-ի և Ֆրանսիայի հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհրդի (HCERES) կողմից Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) համատեղ միջազգային հավատարմագրման գործընթացը, որն առաջին անգամ է իրականացվում ՀՀ-ում**: Հաշվետու տարվա ընթացքում համակարգող թիմերի և համալսարանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել աշխատաժողովներ՝ քննարկելու գործընթացի առանձնահատկությունները, կիրառվող չափանիշներն ու չափորոշիչները: Իրականացվել են մի շարք աշխատանքներ համատեղ հավատարմագրման գործընթացի արդյունավետ իրականացման ուղղությամբ, մասնավորապես՝ անհրաժեշտ ձևաչափերի մշակում, փորձագետների ընտրություն, աշխատաժողովների իրականացում փորձագետների և բուհի ներկայացուցիչների համար: Նախապատրաստական աշխատանքներից հետո երկու երկրների փորձագիտական խմբերն այցելել են ՀՖՀՀ: Գործընթացի ավարտը նախատեսված է 2024 թվականին:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը ընդլայնել է համագործակցությունների շրջանակը՝ մասնավորապես մեկնարկելով ՀՀ-ում Բրիտանական խորհրդի հետ համագործակցությունը: **Բրիտանական խորհրդի հրավերով ՈԱԱԿ աշխատակիցները մասնակցել են «Deep Dialogues» միջազգային միջոցառմանը: Միջոցառման նպատակն էր քննարկել կրթական համակարգում մարտահրավերներից հետո համակարգի վերականգման ճկունության, ներառականության և դրանցում որակի ապահովման կարևորության հարցերը:**

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կնքել է համագործակցությունների պայմանագրեր Վրաստանի՝ Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի (NCEQE) ու Իտալական համալսարանների և հետազոտական կազմակերպությունների գնահատման ազգային կազմակերպության (ANVUR) հետ: Առաջիկա տարիներին նախատեսվում է կենտրոնների հետ փորձագետների փոխանակում, համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում, ինչպես նաև աշխատակազմի շարժունություն և փորձի փոխանակում:

2023 թվականին ՈԱԱԿ-ը, լինելով ERASMUS+ SMARTI, T-GREEN ծրագրերի գործընկեր, ներգրավված է եղել ծրագրերի շրջանակներում իրականացվող միջացառումներին և մշակումներին: Մասնավորապես **ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է մի շարք վերապատրաստումների, ներգրավված է եղել մշակումներում և ծրագրի որակի ապահովման գործընթացներում:** Աշխատանքները կշարունակվեն 2024թ.-ին:

SMARTI (Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով) **ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը մշակել է EMI (Անգլերենը՝ որպես ուսուցման միջոց) կենտրոնների և ծրագրի մասնակից բուհերի կողմից մշակված ու փորձարկված մոդուլների արտաքին գնահատման չափանիշներ:** Չափանիշները քննարկվել են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային փորձագետների հետ: Իրականացվել են վերապատրաստումներ բուհերի ներկայացուցիչների համար ինքնավերլուծություն և SWOT վերլուծություն իրականացնելու նպատակով: Ծրագրի մասնակից բուհերի կողմից առաջադրված մասնագետներից ձևավորվել են արտաքին գնահատող փորձագիտական խմբեր, որոնք 2024 թվականին կվերապատրաստվեն և կիրականացնեն խորհրդատվական արտաքին գնահատման այցեր մասնակից բուհերում:

2023 թվականին ՈԱԱԿ-ի մասնակցությամբ ևս 3 ERASMUS+ ծրագրեր (Micro-GEAR, KPI4HEI, DeSIRe) ստացել են Եվրամիության ֆինանսավորում: Ծրագրերի շրջանակներում մշակվելու են միկրոորակավորումների օրենսդրական կարգավորումներ, վերանայվելու են մի շարք կրթական ծրագրեր փոխանցելի հմտությունների զարգացման տեսակետից, ինչպես նաև մշակվելու է բուհերի արդյունավետության առանցքային ցուցիչների համակազմ, որը փորձարկվելու է մասնակից բուհերում: Ծրագրերը մեկնարկելու են 2024թ.-ին:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը, անդամակցելով Եվրոպական կրթական հիմնադրամին (ETF), մասնակցել է ETF-ի կազմակերպած միջոցառումներին, որոնք միտված են ՄԿՈ համակարգի լավ փորձի փոխանակմանն ու տեղայնացմանը: 2023 թվականին ՈԱԱԿ աշխատակազմի ներկայացուցիչները ներգրավվել են ETF-ի որակի ապահովման ֆորումի Մոլդովայի որակի ապահովման համակարգի գործընկերային գնահատմանը:

2024 թ. նախատեսվում է ETF-ի Որակի ապահովման ֆորումի շրջանակներում ՀՀ ՄԿՈ համակարգի արդյունավետության գնահատում Հայաստանում:

2023 թվականին ՈԱԱԿ-ի երկու աշխատակիցներ, ներգրավված լինելով Բոլոնիայի թեմատիկ խմբերի աշխատանքներում, մասնակցել են որակի ապահովման եվրոպական մոտեցումների տեղայնացմանը նվիրված քննարկումներին և ՀՀ-ում ինքնահավաստագրման գործընթացի կազմակերպման աշխատանքներին: Որակի ապահովման թեմատիկ խմբի աշխատանքների շրջանակներում ՈԱԱԿ-ի կողմից ներկայացված շարժունության ծրագրերին մասնակցելու հայտերը ֆինանսավորվել են ԵՄ-ի կողմից: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի չորս աշխատակիցներ այցելել են Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալություն, Իտալիայի որակի ապահովման գործակալություն, Բելգիայի հավատարմագրման գործակալություն: Ուսումնասիրման ենթակա թեմաներն ընտրվել են ԵԲԿՏ որակի ապահովման գործընկերային աջակցության խմբին ներկայացրած ՀՀ աշխատանքային պլանում ներառված կարիքներին համապատասխան: Մասնավորապես, իրականացվել է.

- **նախնական հավատարմագրման փորձի ուսումնասիրություն** Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունում (NVAO),
- **ծրագրային հավատարմագրման փորձի ուսումնասիրություն** Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունում և Բելգիայի հավատարմագրման գործակալությունում (NVAO, VLHUR),
- **Համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովման փորձի ուսումնասիորություն** Բելգիայի հավատարմագրման գործակալությունում (VLHUR),
- **միջազգային հավատարմագրումների և նախնական հավատարմագրումների իրականացման փորձի ուսումնասիրություն** Իտալիայի որակի ապահովման գործակալությունում (ANVUR),
- **ինքնահավաստագրման փորձի ուսումնասիրություն** Լատվիայի ակադեմիական տեղեկատվական կենտրոնում (AIC):

Որակավորումների շրջանակին համադրելի եռաստիճան համակարգի աշխատանքային խմբի գործունեության շրջանակում **իրականացվել են ինքնահավաստագրման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես**.

- մշակվել է ինքնահավաստագրման գործընթացի ճանապարհային քարտեզն ու գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցը,
- մշակվել է ինքնահավաստագրման մեթոդաբանությունն ու շրջանակը,
- մշակվել է ինքնահավաստագրման զեկույցի բովանդակությունը,
- համաձայնեցվել է աշխատանքային և հավաստող խմբերի ձևավորման ընթացակարգն ու կազմը:

Ձեռքբերումներ

Վերլուծելով միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- **ՈԱԱԿ-ն ապահովում է ՀՀ պետական հավատարմագրումների ճանաչելիությունը** միջազգային մակարդակում,
- ՈԱԱԿ-ը հաջողությամբ անդամակցում է միջազգային և եվրոպական ցանցերին, ինչը հնարավորություն է տալիս **ՀՀ կրթական համակարգը տեսանելի դարձնել միջազգային հարթակներում,**
- միջազգային կառույցների կողմից կազմակերպված սեմինարներին, աշխատաժողովներին և գնահատման ծրագրերին ակտիվ մասնակցության միջոցով **ՈԱԱԿ-ը շարունակում է մնալ որակի ապահովման և կրթության միջազգային լավագույն փորձի տարածման վստահելի աղբյուր,**
- ՈԱԱԿ-ի ներգրավվածությունը ERASMUS+ ծրագրերում և Բոլոնիայի թեմատիկ խմբերում **հանգեցրել է Հայաստանի կրթական համատեքստին հարմարեցված որակի ապահովման շրջանակների շարունակական բարելավմանը,**
- ՈԱԱԿ-ի մասնակցությունը միջազգային միջոցառումներին և ծրագրերին **նպաստել է փորձի փոխանակմանը, կարողությունների զարգացմանը և նորարարական մեթոդաբանությունների տարածմանը հայաստանյան մասնագիտական կրթական համակարգում,**
- **ՈԱԱԿ-ի ձեռաչափերը դիտարկվում են որպես լավ փորձի օրինակ միջազգային մակարդակում:**

ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Հաջողության չափանիշ՝ ՈԱԱԿ-ի աշխատակազմի բոլոր ներկայացուցիչները կիսելու են ՈԱԱԿ-ի ապագայի նկատմամբ ընդհանուր տեսլականը: ՈԱԱԿ-ը կդառնա գրավիչ գործատու՝ ներգրավելով կրթության ոլորտի լավագույն փորձագետներին իր տարբեր նախագծերում՝ ապահովելով ճկուն կառավարման քաղաքականություն:

Փաստեր

Հաշվետու տարում ՈԱԱԿ աշխատակազմի կարողությունների զարգացմանը միտված քաղաքականությունն աշխատակիցներին հնարավորություն է տվել մասնակցել մասնագիտական զարգացման միջոցառումներին ինչպես ՀՀ-ում, այնպես էլ միջազգային մակարդակում:

Հաշվետու տարվա ընթացքում **ՈԱԱԿ-ի բոլոր մասնագետները՝ ըստ իրենց մասնագիտական ուղղվածության, մասնակցել են եվրոպական որակի ապահովման կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին և աշխատաժողովներին:** Կարողությունների շարունակական բարձրացման նպատակով **ՈԱԱԿ աշխատակազմի 8 աշխատակից հաշվետու տարում մասնակցել է միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստումներին Իտալիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում, Նիդերլանդներում, Վրաստանում, Ավստրիայում, Հունաստանում, Լատվիայում, Մոլդովայում:**

ՈԱԱԿ երկու աշխատակից շարունակում են ներգրավված լինել Բոլոնիայի հետամուտ խմբի Որակի ապահվման և Որակավորումների շրջանակների թեմատիկ խմբերի աշխատանքներում, մասնակցում են եվրոպական մակարդակում հետազոտական աշխատանքների և մշակումների:

Կարիքների գնահատման արդյունքում **ՈԱԱԿ-ը հնարավորություն է տվել իր աշխատակիցներին բարելավելու անգլերենի իմացության մակարդակը: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ երկու աշխատակիցներ մասնակցել են անգլերենի մակարդակի բարձրացման վերապատրաստումների:**

ՈԱԱԿ-ը, կարևորելով աշխատակիցների առողջության պահպանումը և բարելավումը, հաշվետու տարվա ընթացքում ֆինանսական միջոցներ է հատկացրել և առողջության ապահովագրության հնարավորություն է ստեղծել նրանց համար:

ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

ՈԱԱԿ աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացումը շարունակել է իրականացվել նաև.

- ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվող վերապատրատումների փաթեթների մշակմանը աշխատակազմի մասնակցությամբ ու որպես վերապատրաստողներ հանդես գալով,
- սկսնակ մասնագետներին, կամավորներին հավատարմագրման գործընթացներում որպես փորձագիտական խմբերի համակարգողի օգնական ներգրավելով (հաշվետու տարվա ընթացքում հավատարմագրման բոլոր գործընթացներում ներգրավվել են կամավորներ, որոնցից մեկը տարվա ընթացքում ներգրավվել է հավատարմագրման գործընթացում՝ որպես համակարգող),
- հավատարմագրման գործընթացներում ներգրավված փորձագետներին ՈԱԱԿ-ի մշակումներում ներգրավմամբ (հաշվետու տարվա ընթացքում մեկ փորձագետ ներգրավել է վերապատրաստումների փաթեթների մշակման գործընթացում):

ՈԱԱԿ-ը շարունակել է կիրառել ներքին սեմինարի մեթոդը տարբեր թեմաների քննարկման և փորձի փոխանակման նպատակով: Փորձի փոխանակման նպատակով աշխատակազմի անդամները նաև կանոնավոր կապի մեջ են տեղացի և միջազգային փորձագետների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է ՄՈՒՀ-երի դասախոսական և վարչական կազմի լավագույն մասնագետներին **ներգրավել որակի արտաքին ապահովման գործընթացներում:**

Ձեռքբերումներ

Վերլուծելով ներքին և արտաքին շահակիցների շրջանում կատարված հարցումները և ՈԱԱԿ-ի աշխատակազմի շրջանում իրականացված SWOT վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- **ՈԱԱԿ-ը հաջողությամբ իրականացնում է անձնակազմի կարողությունների զարգացման քաղաքականությունը՝** առաջարկելով մասնագիտական աճի հնարավորություններ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակով,
- մասնակցելով որակի ապահովման եվրոպական կառույցների և Բոլոնիայի հետամուտ խմբի կողմից կազմակերպված վերապատրաստումներին և աշխատաժողովներին՝ **ՈԱԱԿ աշխատակիցներն ակտիվորեն նպաստում են եվրոպական մակարդակով հետազոտական աշխատանքներին:** Այս ներգրավվածությունը խթանում է փորձի փոխանակման մշակույթին, որը համահունչ է սովորող կազմակերպության սկզբունքներին,
- **մեծացել է ՄՈՒՀ-երի տարբեր ոլորտների փորձագետների հետաքրքրվածությունը փորձագիտական աշխատանքի նկատմամբ:**

Մարտահրավերներ և զարգացման ուղղություններ

- ՈԱԱԿ-ի անդամակցություն WFME-ին և բժշկական կրթության ոլորտային չափանիշների մշակում և հաստատում:
- Միջազգային համատեղ հավատարմագրումներում ՈԱԱԿ-ի մասնակցության ընդլայնում:
- Որակի արտաքին գործընթացների կանոնակարգող փաստաթղթերի և իրավակարգավորումների վերանայում և հաստատում:
- ՈԱԱԿ կանոնադրական նպատակների ընդլայնում, ինչը կապահովի ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի դրույթների իրականացումը և ՈԱԱԿ-ի միջազգային գործունեության ընդլայնումը:
- Կրթական գործընթացների հետազոտության համար հարթակի ստեղծում:
- Լրացուցիչ կրթական ծրագրերի որակի արտաքին ապահովում և հավատարմագրում:
- Ուսանողական ազգային հարցման համակարգի ստեղծում պետական և մասնավոր հատվածի շահակիցների հետ՝ ուսանողների, գործատուների կարծիքը դիտարկելով որակի ապահովման թափանցիկության և որակյալ կրթության ցուցիչ:

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

15 տարվա ճանապարհ
դեպի տրակ

Երևան 2024